

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 Ժր.

Վեցամսեայ ... 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Օրկու քիւ միկ ծրարով

Տարեկան ... 14 Ժր.

Վեցամսեայ ... 7 Ժր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 Ժրար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման սուղը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ԶԻՄՆՔԻՆԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ի

Adaction du journal

"Iracvounk"

VARNA (Bulgaria)

Редация

НАВѢСТНИКЪ

Иравунк"

ВАРНА

Հրատարակւիք եւս չեմ
տրոշիր

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑ ՍԸ

Ռուսացական մէկ քանի պուլկարա-
հրատարակ ազգայիններ հետեւեալ նա-
մակը ուղղած են Պուլկարիոյ բոլոր
թաղ. խորհուրդներուն .

Պուլկարիոյ հայ գաղթական-
նութեան Ազգ. եկեղեցական
խնդիրներ կարգադրելու սահ-
մանուած որոշ կանոնադրութիւն, և
Պուլկարիոյ հայութիւնը ներ-
կայացնող պաշտօնական մարմին
մը գոյութիւն չունենալուն հա-
մար, յաճախ անհաճոյ դէպքե-
րու տեղի կը տրուի, երբ ու եւ է
խնդիր լուծելու պէտքն զգացը-
ւի այս կպմ պէն հայ համայն-
քին մէջ .

Մեր խօսքը, ընդհանրապէս,
թաղականութեանց ընտրութեան
մասին է, քանի որ հոգաբարձու-
թեանց իրաւունքն ու պարտա-
ւորութիւնները գծուած են
պուլկարական օրինադրութիւն մէջ,
իսկ միեւնոյն օրինադրութիւն մէջ
թաղականութեանց ընտրութեան
եղանակը որոշապէս գծուած չըլ-
լալով՝ իւրաքանչիւր հայ հա-
մայնք տարբեր կերպով կը կա-
տարէ ընտրութիւններ — տեղ
տեղ Սահմանադրութեան օրինաց
համաձայն, տեղ տեղ ալ՝ կառա-
վարութեան միջամտութեամբ .
Առաջինները քուէարկելու իրա-
ւունք կուտան թէ՛ պուլկարա-
հպատակներուն, թէ՛ օտարա-
հպատակներուն, իսկ վերջինները
միայն պուլկարահպատակներուն .

Արդ, ըմբռնած ըլլալով օգտա-
կարութիւնը հաւաքական (հպա-
տակ թե ոչ-հպատակ) քուէար-
կութեան, կուզենք գիտնալ թէ՛
թաղ. խորհուրդին և կառավարու-
թեան միջեւ գոյութիւն ունեցող
յարաբերութիւնները պաշտօնա-
կան ընդթ կը կրեն թէ ոչ
վասնզի կ'առարկուի թէ՛ այն թա-
ղական մարմինները, որոնք հա-
ւաքական քուէարկութեամբ կըն-
տրուին, և մի միայն Պատրիար-
քարանէն կը վաւերացուին, կա-
ռավարութեանէն իբր պաշտօնա-
կան չեն ճանչցուիր .

Ամէն պարագայի մէջ կարեւոր

կը համարենք ընտրութեանց
եղանակի միօրինակութիւնն ըս-
տի հայաշատ կեդրոններուն հա-
մար, Այսպէսով վերցուած պի-
տի ըլլայ չարիք մը, որ եթէ
չարունակէ պահպանել իր գոյու-
թիւնը, աղէտաբեր կընայ ըլլալ
մեր եկեղեցական գործերու ինք-
նավար դրութեան համար. հա-
կառակ պարագային կառավարու-
թեան ոտնձգութեանց պիտի զոհ-
ուին մեր ազգային իրաւունքնե-
րը .

Եւ այս միօրինակութեան հաս-
նելու համար անհրաժեշտ կը
համարենք իւրաքանչիւր հայա-
շատ կեդրոնի ընտրութեանց ե-
ղանակի մասին տեղեկութիւններ
հաւաքելը, որպէս զի տրուած
տեղեկութիւնները իրարու հետ
բաղդատելով՝ կարենանք որոշ
եղանակացութեան մը յանդիւ և
մեծամասնութեան ընդունած
ձեւն ու եղանակը՝ իր ներկայա-
ցուցած առաւելութիւններուն
համեմատ, հրապարակաւ առա-
ջարկենք ընդհանուրին .

Ուստի, յանուն Ազգ. շահերուն,
խնդրենք որ հաճիք մեր հար-
ցումներուն պատասխանել հետե-
ւալ կարգաւ .

- 1.—Պատ. թաղ. խորհուրդը պաշտօնավարութիւնը քանի՞ տա-
րի կը տեւէ .
- 2.—Ձեր պաշտօնավարութեան
շրջանը լրանալէ ետքը նոր թա-
ղականութիւն ընտրելու համար
Խորհուրդը, առանց նախարա-
րութեան հրահանգին սպասելու,
իրաւունք պիտի ունենայ իր
կողմէն ժողովուրդը քուէարկու-
թեան հրաւիրելու .
- 3.—Քուէարկութեան մասնակ-
ցելու իրաւունք ունեցող ազգա-
յիններու ցանկը ո՞վ կը պատ-
րաստէ .
- 4.—Քանի՞ տարեկանէն վեր ե-
ղողները իրաւունք կունենան
քուէարկելու .
- 5.—Ոչ հպատակներն ալ կը
մասնակցին՞ քուէարկութեան .
- 6.—Եթէ կը մասնակցին՞ ո՞ր-
քան ժամանակէ ի վեր քաղաք-
հաստատուած ըլլալու են .
- 7.—Ոչ-հպատակները կրնա՞ն

միանգամայն ընտրելի ըլլալ .
8.—Ընտրութիւնները կատար-
ուելէն ետքը միայն Պատրիար-
քարա՞ն կը դիմէք նորընտիր
մարմինը վաւերացնելու հա-
մար, թէ՛ նախարարութեան վա-
ւերացումն ալ պէտքը կ'զգաք .

9.—Եթէ ոչ-հպատակներ ալ ըն-
տրուին՝ նախարարութիւնը զա-
նոնք ալ կը վաւերացնէ՞ եւ օ-
րէնքի ո՞ր յօդուածի տրամադ-
րութեան համաձայն .

10. Եթէ Խորհուրդը անվաւեր
է կառավարութեանէն, եկեղեցա-
կան կալուածները որո՞ւ անունով
արձանագրուած են կառավարու-
թեան տոմարին մէջ .

Սպասելով Ձեր պատասխանին
կը մնամք յարգանք

Յ. Գ. — Եթէ կան մեր կողմէն
չկանխառնուած պարագաներ,
հաճեցէք անոնց մասին եւս
գրելու .

Ռուսչուղ 19 սեպտ
1904

Դիտ. Խմբ. — Պուլկարիոյ մէջ
հայ եկեղեցիներու թաղ. Խոր-
հրդոց ընտրութիւնները գրե-
թէ առանց բացառութեան կա-
տարուած են ցարդ ըստ մեր Ազ-
գային Սահմանադրութեան տը-
րամադրութեանց. այսինքն իւ-
րաքանչիւր քաղաքի մէջ 2-3
տարիէ ի վեր հաստատուած և
25 տարին լնացած ամէն հայ
մասնակցած է ընտրութիւննե-
րուն . Նոյնպէս և ոչ մէկ քաղա-
քի մէջ պուլկար կառավարու-
թիւնը ոչ ինքնաբերաբար և ոչ
հայերու հրաւերովը միջամտած
է. որովհետեւ թաղականութեան
մը ընտրութիւնը զուտ եկեղե-
ցական ներքին խնդիր ըմբռ-
նուած է սկիզբէն ի վեր . Դալով
պաշտօնական յարաբերութեանց,
պուլկար կառավարութիւնը ճանչ-
ցած ըլլալով հայ եկեղեցւոյ ան-
կախ ինքնավարութիւնը, յարգած
է ցարդ և պաշտօնապէս ճանչ-
ցած հայ ժողովուրդի անկախա-
բար ընտրած թաղ. խորհուրդնե-

րը, և հետեւաբար ասոնք պէտք
ունեցած չեն կառավարութեան
վաւերացման ենթակուելու .
քանի որ անգամ մը վաւերացը-
ւած են Պուլկարիոյ Պատրիարքա-
րանէն, որ արդէն ինչ ինչ պա-
րագաներու մէջ պուլկար կա-
ռավարութեան և Պուլկարիոյ ներ-
կայացուցիչներուն հետ յարա-
բերութեան և բանակցութեանց
մտած է իբր պուլկարահայոց
հոգեւոր բարձրագոյն իշխանու-
թիւնը, Նոյն իսկ դատական
կնճառութիւններու մէջ թէ՛
պուլկար դատարանները և թէ՛
քաղաքապետութիւնները առ-
եաններու առջեւ պահանջատէր
և պարտապան ճանչցած են հայ
եկեղեցւոյ թաղ. Խորհրդոց ան-
դամները որոնք միմիայն Պատրի-
արքարանէ վաւերացուած են .
Նախարարութիւնը երբեք վերջի
կամ վերաքննիչի իրաւունք չէ
տուած ինքն իրեն, ցորչափ այդ
տեսակ իրաւունք մը անպատճառ
իրեն վերապահելու համար Հա-
յերու կողմէն դաւաճանային
գիմուսներ չէ եղեր . Ցաւալի է
ըսել թէ այս օրինակ զգուշի
քայլ մը միայն Ռուսչուղի մէկ
քանի հայերը առած են . Այդ-
քայլին հետեւանք դառն պիտի
ըլլայ ու վարակիչ, եթէ անոր
առջեւ չառնուի ու վերջին ան-
գամ կատարուած ընտրութիւնը
չեղեալ նկատելով, ի նորոյ զուտ
ազգային ընտրութիւն մը չը
կատարուի խաղաղօրէն .

ՄԱԿԵԴՈՆԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Լ'Եօփօրէէն» ի մէջ կը կարգանք
հետեւեալը .

«Պերլինի խաղաղութեան մի-
ջազգային մնայուն Դիւանը վեր-
ջերս Յիշատակագիր մը հրա-
տարակեց Մակեդոնիոյ ու Հա-
յաստանի հարցերու մասին .
Յիշատակագիրը՝ Պերլինի դաշ-
նագրին նախընթաց ու հետե-
ւորդ իրողութիւնները յիշատա-
կելէ յետոյ, կեղքակացնէ խնդ-
րելով որ ձեռնհաս իշխանու-
թիւնը գումարումի մը գրգը-

աւել 13 յուլիս 1878 ին Պերլի-
նի գաշնագիրն ստորագրող պե-
տութեանց ներկայացուցիչները,
Թուրքիան ալ մէջն ըլլալով,
առաջագի լսեն Ռուսիոյ ու Աւս-
տրո-Հունգարիոյ կառավարու-
թեանց տեղեկագիրը, վերաբեր-
մամբ հետեւանքին իրենց նոր-
օրեայ գիւտնագիտական միջա-
մտութեան ի Կ. Պոլիս, եւ այդ-
երկու հարստահարեալ գաւառնե-
րու դատը իրաւարար ատեա-
նով լուծումի մը յանգեցունեն
եթէ ժամանակը եկած կը հա-
մարեն վերջ մը տալու թուրք
կառավարութեան յետաձող պա-
տասխաններուն, որոնք վտանգ
կ'սպառնան միջազգային խաղա-
ղութեան ։

ՆԱՄԱԿ ԵՐԻՋԱՅԷՆ

Երկրայ 190՝ սեպտ. 16

Շատ ժամանակէ ի վեր կուգէի գե-
րել Քէմախի գազախի գիւղերուն վի-
ճակը, այնչափ ծանրացած է որ խեղճ
գիւղացիները տուններուն զոներէն
զուրս չեն կրնար ելնել մէկ ամիս է ։
Դաս Տէրաբիմա քերպը բացէ ի բաց
սկսեց պարտիւ ինչ որ գտնայ կը
տանի, նամանաւանդ Բագասիճի երկու
գիւղերը, ոչ փայտ կրնան բերել ոչ
ալ ուրիշ տեղ մը կրնան երթալ ։ Տը-
րապիզոնի լազիբը զարձեալ սկսեցին
զինու զօրութեամբ ծխախոտ ձգել
գեղանը, այսօր 5 քաշ ճիւղախոտ կը
ձգէ, 10 օր վերջը կուգայ զրամը կու-
ղէ խեղճ գիւղացին ինչ ընէ. ստիպ-
եալ է ախոսին եզը ծախել ու շանը
գրամը տալ. երբ գրամը կաննէ, 15 օր
վերջը նորէն կը բերէ 10 քաշ կը ձը-
ղէ ու կըսէ. « օճ կրնն սօնրա կէլի-
րիմ, փարայ հազըր իտէսին » ։ Վեր-
ջապէս եթէ եղածը զրեմ պէտք է 10
օր շարունակ նամակ գրեմ, Երկիր եր-

թալու համար քիսիկի կուտան սակայն
11 ոսկիի. արտասահմանի համար եր-
բէք չեն տար ։ Պատրիարքը կը քնա
նայ ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈԻԿԱՐ ՊՈԻՍ ԵՐՈՊ
ՆԱԽԱՆՁՈՐԴՈՒԹԻՒՆԵՐԸ

Այնչափ տեղերն երբ Պուլկարները
կ'սկսին այլ եւս ուշադրութիւն չը
դարձնել յոյն տարրին աղղիցութեան,
զոր այլ եւս անգոր կը համարեն օր
ըստ օրէ ընդարձակուող քուցովաբ-
եան շարժումին շնորհիւ, ահա հիմա
ալ սկսած են վախալ ուրիշ ազգե-
ցութիւնէ մը, սերպ տարրին աղղիցու-
թենէն, որուն գործունէութեան մա-
սին, իրաւ է, միշտ կը կասկածէին,
քանի որ այն տարրներէ ի վեր կայ
ու կը մնայ, Մակեդոնիոյ սովորչ հիւ-
սիսպին. արեւելեան կողմերը, Սերպիոյ
սահմանագիծէն մինչեւ Եւրաստորի
չրկանները ։

Իրօք, հիմայ Պուլկարք կը մեղա-
դրեն սերպ տարրը ըսելով. թէ յոյն
տարրին քայքայումէն այն միայն յօ-
տուեցաւ առանց սակայն դործն մաս-
նակցութիւն մը ունենալու ։ Ապստոմ-
բական շարժումին ։ Ամեն ըրածը կը
սեն, սա եղաւ որ եղբայրակցութիւն
եկաւ հրատարակեց, երբ ամեն բան
վերջացած էր եւ վտանգի մը գիւղա-
բնու հարկ չկար, Բացի ասկէց զօ-
րապետ Աթանասովիչի կողմէ զրիւտ
հրոսախուժեանքն իսկ զոչ չացան թուրք
զինուորներուն հետ համարձակ կը-
ռահուաւ ։ Բայց անոնք գիտցան եւ վի-
տեն դեռ—այդհրոսախուժեանքն չառե-
րը դեռ Մակեդոնիոյ մէջ են—մարդ-
արտութիւն ընել Պուլկարներուն մէջ,
Տարիէ մը ասդին, բազմաթիւ Սերպեր
կրցան կամաց կամաց չմանել Մակե-
դոնիոյ հիւսիսային ու կենտրոնական
մասերուն մէջ եւ հոն առաջնորդի ու
խմբապետի դեր խաղալ ի բացակայու-

թեան պուլկար երիտասարդներու, ո-
րոնք չկրցին իրենց յեղափոխական
կայանները հասնել ։

Արդէն քանի մը ամիս կայ՝ գէպի
սերպ ազգամուշները անվտանգութիւն
մը ի յայտ կուգար պուլկար ահաբե-
չիչ խմբակին մէջ, որ կազմուած է
կազմակերպութեան մասնախումբե-
րուն ամէն անկարգապահ ու մալե-
աանդ մասնիկներէն ։ Այս ահաբեկիչ
խմբակին է որ կը պատկանին մեծ
մասամբ այն զօմիքաւորները որոնք
այնչափ յաճախ Յոյներ կ'սպաննեն
եւ, մինչեւ աստիճան մը, խոչընդոտ
կ'ըլլան յեղափոխական կազմակեր-
պութեան ձեռք առած սպասողական
միջոցներուն, մինչեւ որ բարեկար-
գութեանց արդիւնքը յայտնուի ։ Հե-
տեւարար զարմանալի չէ, որ հակա-
պուլկար շարժում ծաւալուելու ամբաս-
տանութեան տակ գտնուող ինք սերպ
երեւելիներ սպաննուեցան, Լ. զեռ
վերջերս, Բորչի վոյի հիւսիսային արեւ-
ելեան կողմը Մանասորի նահան-
գին մէջ, կատաղի կուր մը տեղի ու-
նեցաւ պուլկար եւ սերպ զօմիքաւոր-
ներու միջեւ եւ մեռնողներ ու բազ-
մաթիւ վիրաւորներ եղան ։

Պուլկարաբ կառավարութիւնը հոգած
խոյս աւելու երկու ժողովրդոց միջեւ
ծագլի կրցող ու եւ է թիւրիմացութե-
նէ մը արժան համարեց զիւրոյ մը
հրատարակել, որով պուլկար ու սերպ
կառավարութիւններն ու ժողովուրդը
բացարձակապէս անմեղադիր կը յայ-
տարարէ զօրծուած օղբալի սպանու-
թեանց ու կոխներուն հանդէպ ։ Կոյ
պանէ մակեդոնական կազմակերպիչ
ները, որոնք այլ եւս համակողմանի
չեն դառնար ոչ Պուլկարիոյ մէջ, ոչ ալ
Սերպիոյ մէջ, կորսնցուցած են ամեն
յեղափոխական կարեւորութիւն եւ
պարզ աւագակներու հրոսակներ դար-
ձած են ։ Աւանդ հայրենիքի արա-
տութեան համար կուտող հայրենա-
սէրներն չեն, այլ իսկական հաղկա-
հարներ ։ Մակեդոնիոյ ինքնօրինու-
թեան նշանաբանին տակ գետին կը
պատրաստեն օտար երկրակալութեան
կամ այնպիսի կնճռոտութեանց, որոնք
կրնային ամենածանր հետեւանքներ
ունենալ ։ Այդ գունակ կնճռոտու-

թիւները կրնային ծագլի նմանապէս
եթէ, այս ինքնակոչ պուլկար հրոսա-
խուժեանքն դային ընկերակցէին աւա-
զակութեան նոյն նպատակաւ սերպ
ու յոյն հրոսախուժեանք ։ Զեկոյցը ի-
վերջոյ յայտ կը յայտնէ, թէ Սերպիոյ
ու Պուլկարիոյ կառավարութիւնները
պիտի կրնան, Ռուսիոյ ու Աւստրո-
Հունգարիոյ օգնականութեամբ, այդ
հրոսախուժեանքը զսպելու միջոցները
խորհիլ ։

Մեղադրական այսպիսի լեզու մը
յատուկ է շատ մը Սերպ քաղաքա-
գէտներու ։ Պէտք է խոստովանիլ
որ քիչ յատուկ է ան եւ չէ ազա-
նակութեան ու ինքնագործութեան
։ Մարդ չկրնար ճշդիւ որոշել թէ
մակեդոնական կազմակերպութիւննե-
րէն ո՞րն է զոր դատապարտել պարտք
կը սեպէ ինչեւ զեկոյցը, եւ մինչ-
չեւ իսկ գիւտած կընէ Ռուսիոյ ու
Աւստրո-Հունգարիոյ օգնականու-
թեան (ինչ տեսակ օգնականութիւն
արդեօք) ։ Իրաւ որ, տափալու-
թեան անդիի ծայրն է ենթադրել
որ այս երկու տէրութիւնները կա-
րող են օգնութեան դալ Պուլկարաբ
ու Սօֆիայի դահլիճներուն ։ Թուի
թէ Պուլկարաբ մէջ լուր չունին այն
ամբաստանութիւններէն ու զրդիոնե-
րէն զորս Ռուս գիւտնագիտութիւնը
կ'արձակէ աւստրիական գիւտնագի-
տութեան երեսին ։ « Նօվոէ վրէմի »
լրագիրը բացորոշ բառերով կըսէ,
թէ փրկութիւնը, հանդէպ հետզհետեւ
աւելի իրական դարձող աւստրիա-
կան վտանգին, Սերպո-Պուլկար
համերաշխութեան մէջ միայն կը գըտ-
նուի ։ Պաշտօնական Ռուսիան զո-
նէ անգամ մը անկեղծ դուրս կու-
գայ խոստովանելով պաշտպանը չըլ-
լալը սլաւաբանեան Սլաւներուն, զօ-
րու իրենց սկսական ուժերուն կը
թողու ։

Տարակուսելի չէ որ Բեթլեմի գա-
լիճը տեղեկութիւն տանք սերպա-
կան զեկոյցէն անոր հրատարակու-
մէն առաջ եւ թէ իր Մօսկովեան
դուլ մը կըրող (թող ուրիշները անճա-
խօսքեր ընեն) բանգիրտութեան շնոր-
հիւն է որ անպատեհութիւն մը չտե-

ՆԵՐՍԷՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտաստուած ՐԱՋՄԱՎԷՊ հանդէսէ)

Եւ ահա ապացոյց եւ նախադիւրք ձեզ, որ
ձեր որդիքը մի բառ հայերէն չգիտեն, մինչ-
դեռ ձեր հանգուցեալ հայրը հայոց ազգի ան-
մահ բարերար աղա Յովակիմը ջանացել է, որ-
պէս իսկական ազգասէր հայ, ձեզ, երեք եղ-
բայրներդ եւ ձեր երեք քոյրերին էլ հայերէն
խօսել եւ կարդալ ուսուցանել տալ ։ Օրհնած,
միթէ Հայերի մէջ չկար արժանաւոր փեսացու
որ զուք ձեր աղջիկը տուէլ էք գերմանացի կո-
մս Ներսիսին, մի միլիոն ռուբլի օժիտով ։ Ես
ճանաչում եմ Դէլիանեանցին, նա անշուշտ աղ-
նաւան էր ։ Ըստահողի հայրդ քրոջ ամուս-
նացնելով նորա հետ՝ աշխատեց եւ նորան մին-
չեւ գեներալութեան աստիճանին հասցրեց նոյն-
պէս միւս փեսաներին, իշխան Աբամելիքեանցին
եւ Հայրապետեանցին, որոնք մեծոք աստի-
ճանի եւ հարստութեան հասան նորա շնորհիւ
ու բնի քան թէ մի միլիոն օտարին տալ՝ լա
չէր լինի, որ Հայերից ընտելեք փեսայացու
եւ նորան ձեզ արժանի գիրքի հասցնէիք,
ինչպէս հանգուցեալ հայրդ արեց ։

Նախարար Պերովսկին յայտնեց կաթողիկոսին
թէ Էջմիածնի Սինօգի պրօկուրօր Մատինեանցի
րոգոքի հիման վերայ եւ կովկասի զլխաւոր կա-
ռավարիչ գեներալ Նէյտպարտի համաձայնու-
թեամբ Էջմիածնի Սինօգի անդամներից երկու
արքեպիսկոպոսներ, իրանց վատ բնաւորու-
թեան պատճառով, պիտի աքսորուեն, նորանց
ներկայութիւնը Էջմիածնում, ասաց նախարարը
վտանգաւոր է համարուում եւ ձեր կեանքի նը-
կատմամբ, որովհետեւ կարծիք դոյացել է, թէ
նորանք կարճ միջոցում Էջմիածնի միաբաննե-
րից մի քանիսին զեղել են, ուստի իւր, նա-
խարարի, գեղուցման համաձայն կայրը վըճ-
ուել է աքսորել նորանց կալուգա նահանգը,
այն է խոր Ռուսաստան ։ « Այդ եպիսկոպոսնե-
րն էին Յովակիմ Տէր—Մարուգեանց եւ Ստե-
փաննոս Արարատեանց ։ Կաթողիկոսը պատաս-
խանեց, թէ « Ես երկուսին էլ ճանաչում եմ,
մոյլ տուէք մինչեւ ես Էջմիածնի հասնիմ,
եթէ նորանք առեւծ էլ լինին ինձ հետ կա-
տու կը դառնան », Պերովսկին պատասխա-
նեց, թէ արդէն կայրը վճիռն ստորագրել է ։
Կաթողիկոսը յայտնեց, թէ շատ անյարմար է
հայ եպիսկոպոսներին կալուգա աքսորել, որ-
տեղ հայ բնակիչներ չկան եւ խնդրեց վճիռը
փոխել ։ Իսկ Էջմիածնի անհնարին լինի այդ, գո-
նէ այնպիսի տեղ աքսորել, որտեղ հայ բնա-
կութիւն կայ ։ Վերջն որոշեցին եւ աքսորե-
ցին Մօզդոկ հայրնակ քաղաքն, ուր երկու-

սն էլ մնացին մինչեւ կաթողիկոսի Էջմիածնի
հասնելը ։ Էջմիածնի Սինօգի Պրօկուրօր Ստե-
փան Մատինեանցը շատ կարգապահ եւ մարդա-
սէր մարդ է եղել ։ Եւ որպէս Հայաստանեայց
եկեղեցու հարադատ որդի աշխատել, ամեն
ճիւղը գործ է դրել, որ սկսած տաճարից մին-
չեւ բոլոր միաբանների բնակարաններն եւ գա-
ւիթը մաքուր պնդութեան մէջ պահպանուին ։
Ամեն բանում երեւի այնպիսի բարեկարգութիւն,
որ վայել լինի Մայր Աթոռի պատուին եւ
նշանակութեանը ։ Այս նպատակով Սինօգի ան-
դամներին համոզում է եւ մի քանի կար-
գազրութիւններ անել է ստալա տաճարի ներ-
սում ։ « Եւ մեռնի արծաթեայ կաթոսայի համար
առանձին տեղ է չինել տալիս, իւր բերել տը-
ւած մարմարեայ քարերով, որ լինի վայելուչ
եւ ի սեւ ուստաւորների եւ այդ տեղն ընտ-
րուած էր աւագանը, քանի որ Էջմիածնի տա-
ճարում մկրտութիւն չէ լինում, այսպէս եւ մի
երկու փոփոխութիւններ ։ Եւ մինչդեռ քարտաշ
վարպետները բանելիս են եղել եւ սկսել գե-
տեղել մարմարեայ քարերը Յովակիմ արքեպի-
սկոպոսը Տէր Մարուգեանցը լինելով Սինօգի ան-
դամ բախտաբար քաղաքի վարպետներին քր-
դում է աւագանի տեղ « ։ Եւ մեռնի կաթոսան
գետեղել, սպառնալով հակառակ դէպքում նո-
րանց Սինօգի աքսորել տալ ։ Վարպետներն եր-
կուց կրկնով եպիսկոպոսի սպանալիքից չէնու-

սաւ այդ բանին մէջ :

Եթէ իրեն մնար այդ տեսակ չէր խմբագրէր յիշեալ զեկոզագրիւր : Աօֆիայի մէջ «Ռամկավարական» կուսակցութիւն մը կայ , ինչպէս կը սիրէ ինքզինքը յորջորջել , զոր կարգ մը քաղաքագէտներու պոստախօսութիւնը կասկածու կրնէ զէպի հաստատուելու վրայ եղող սերպոսպառարկան քաղաքական եղբայրակցութիւնը :

Իր բերանն եղող թերթերէն մին , «Երեւոյն» յառաջ կերթայ մինչեւ ազգութեան բողոքելու Սերպերուն բռնած կերպին դէմ , իրենց Բեթթ թաղաւորի թաղաքութեան պահուն , կերպ մը որ կուզէր յիշեցունել Բիշմանի դիրքը Բաղլիոյ սիւնիւնէն առաջ : Սերպիոյ Սերպերը փափաքելով պիտի փափաքէին իրենց թաղաւորին իշխանութիւնը տարածել Հարաւի բոլոր սերպերուն վրայ , եւ ահա ասոր դէմ է որ պուլկար լրագիրը կ'ուզէ հանել Պուլկարիոյ ամբողջ նորածին ուսուկալարականները :

Իրաւ է որ այս ձայնը չափէն աւելի զայրացկոտ է եւ թէ , ընդհակառակն ըլլալով , Աօֆիայի կուսակալստեան թերթերը մեծ պաշտօններու թեմաք կը նային երկու ժողովուրդներու միջեւ եղած յարաբերութիւններուն : Երբ կիսապաշտեանական «Նով-Վէր» ը սա կըսէ , «Թուանք թէ Բեթթ թաղաւորը ամէն ժամանակ տւելի եռանդով պիտի յարաւեւէ իր քաղաքականութեան մէջ , որ կոչուած է հինք ըլլալ պալլական ամէն ազգերու դաշնակցութեան մը , միակ երաշխաւորութիւն իրենց զարգացման ու քաղաքական յոռադիմութեան » , այն ժամանակ , ստորագ է , որ կը մոռնանք «Երեւոյն» ի զայրագին խօսքերը համասերպական ձգտումներուն դէմ : Սակայն կը մնայ մաղթել որ Պերկարի հոնտորները իրենց խօսքերը չսփաւարեն , որպէս զի սերպ կառավարութեան քաղաքականութիւնը վնաս մը չկրէ անոնց երեսէն :

Մակեդոնական դատին ուրիշ ոչինչ

այնքան սպանական կրնայ ըլլալ , որչափ սերպ ու պուլկար տարբերուն : Նախանձորդութիւնը , Հեռաւարտ սղեւարտի են անոր համար սերպական զեկոզագրին այդ բացորոշ ու անտեղի ամբաստանութիւնները , ուղղուած հասցէին սոյն կողմակերպութեանց որոնք արդէն զբաղուած կը զսպեն օրինաւոր անհամբերութիւնները : անոնց կարգ մը արքանականութեան անկարգապահութիւնները ու անխուսափելի վայրագութիւնները այնչափ քիչ կրնանք անոնց վերագրել , որչափ Պերկարտի եւ Աօֆիայի կառավարութեանց , որոնք փութալանութիւն ցոյց կուտան իրենց պատասխանատուութիւնները փրկելու :

Ս.—Մ.—Ս.
Լ'ԵՐՈՐՈՒՆԷՆ

ԳՐԱԺՈՍԱԿԱՆ

«Իրաւունք» ի 48 րդ. թուին մէջ արդէն ծանուցած ենք տարաւ Ս. Չօպանեանի նոր մէկ հրատարակութիւնը Մկ-ից Պեշկապալեան ի խորհրդածները ու ճառերը :

Տիար Միւսա Չերազ հեռեւեալ դիտողութիւնները կրնէ այդ հրատարակութեան վրայ իր «Լ'Արմէնի»-ին մէջ , «Տ. Ս. Չօպանեանի վերջերս նորոգ տպագրութեան ի լոյս ընծայած է Մկ-ից Պեշկապալեանի քերթածները ու ճառերը , սրբագրուած օգտակար ծանօթութիւններով ու ճոխացած , Այս նոր տպագրութեան մէջ մտցուցած է երեք քերթուածներ , որոնք չկային 1870 ին Տիար Շիշմանեանի (Միւրեղ) խնամքով Կ. Պոլիս հրատարակուած առաջին տպագրութեան մէջ , բայց հրատարակուած էին Մալիս ի մէջ : Տ. Չօպանեան խելագիր գրական ունեցած է ինչ ինչ դրարար քերթուածներու կցել անոնց աշխարհարար թարգմանութիւնը :

Մեզք , որ պահած է—իրաւ , մասամբ վր—խորդի բառը , հնարուած Շիշմանեանի երկոտտութիւնն հեղինակին զեկոզագրի բառին տեղը բռնելու համար , եւ աչքէ անցուցած չէ մեր Իրական փորձ երուն ժԳՆու ժԳ էջերը , ուր մենք արտագրած ենք Պեշկապալեանի երկու ինքնագիր քերթուածները լաւագոյն տարբեր ընթերցուածով քան Շիշմանեանի հետեւած քնագիրը , զոր ճշիւ օրինակած է Տ. Չօպանեան իր հրատարակութեան մէջ (էջ 115 ու 118) » :

ԱԶԳԱՅԻՆ

Ըստ «Խաւրհանգուկ» ի Խաւրհանգ Ժամհարեանէն 30000 ըուպլի պահանջած ըլլալու յանցանքով ամբաստանուած երեք անձեր , Մովսէս Մինասեան , Արսէն Ամիրեան եւ Սմբատ Մարգարեան սեպտ. 10 ին Շուշիի մէջ դատուելով , առաջին երկուքը 6 ամիս տարի տաժանակիր պաշտուածեան դատադարտուել են , իսկ Սմբատ Մարգարեան անպարտ արձակուել է : Դատավարութիւնը գնահատել տեղի ունեցած է :

—Թիֆլիզի դատական ատենանք սեպտ. 21 ին վերաբնեւում Տէր—Առաքելեան եւ Տէր—Մինասեան քահանաներու եւ կարսի 28 բնակիչներու դատը որ արդէն տեւանուած էր Երեւանի ատենանին կողմանէ , երկու քահանաները դատապարտուել են մէկ տարի , 10 հոգի 8 ամիս ամիս բանտարկութեան կալանաւորներու բաժնին մէջ մնալու եւ 3 հոգի ալ 3 ամիս ամիս բանտարկութեան , իսկ

մնացածները անպարտ հռչակուել են : Ամբաստանեալները կը պաշտպանէին Թիֆլիզէն եւ Մոսկուայէն եկած հայ եւ ռուս փաստաբաններ :

—Սօֆիայի մէջ Թաղ . քուէարկութիւն կատարուելով , 189 ընտրողներէն 121 ին մասնակցութեամբ Թաղական խորհրդոյ անդամ ընտրուած են Տեարք Բօլ Ասքերեան (Ատենապետ) , Արքաւամ Մարտեան (Ատենապետ) , Մարտիրոս Յովհաննէսեան (Գանձապետ) , Մատթէոս Յակոբեան եւ Թորոս Ներսէսեան :

—Վիմանեանք որ Շուշիի թեմական դպրանոցը , որ ներքին գործերի սպաննուած նախարար Բլէվէի հրամանով փակուած էր ներքին գործերի նոր նախարար իշխան Սվիատոսլոբ Միրաքի արտօնութեամբ պիտի վերաբացուի :

—«Արմէնիա» լրագիրը կ'իմանայ թէ Հապէշիտանի մայրաքաղաքին Ատիս Ապապարի մէջ հաստատուած ոսկերիչ Տ. Պօղոս պաղտառցի երկրին խորքը խուզարկելով գտեր է հանքերի հետքեր , որոնցմէ մէկ մէկ կտոր Ատիս-Ապապար տարեր եւ զանոնք շահագործելու համար արտօնութիւն ստացել է Հապէշների Մէնէլիք կայսրէն : Տ. Պօղոս կը կարծէ թէ իր գտած հանքեր աւելի ճոխ են քան Թրանսկասիի ոսկեհանքերը : Կայսրը զինք Եւրոպա պիտի շրկէ եղեր պէտք եղած մեքենաները գնելու համար :



Թիւնը թողնում եւ հեռանում են եւ յայտնում Մատինեանցին , որ դիմում է Սինօքի անդամներին ասելով . « Եթէ այդ չենք կարելի չէր , ինչու նախագոյն համաձայնութիւն տուեցիք եւ ես այսքան ծախս արեցի , եւ ի՞նչ վնաս կայ դրանից , քանի որ մի եւ նոյն միւրտութեան աւազանը իւր տեղում անշարժ մնալու է : Թողե՛ք եպիսկոպոսը հակառակում է եւ պնդում , թէ չէ կարելի աւազանը խափանել : Երկար վիճելուց յետոյ զաղարեցնում են յիշուելուն , որ լինում է սկզբնապատճառ եւ պիսկոպոսի եւ Պրիկուրօրի գծաութեան որից , յետոյ , աչքի առաջ ունենալով եպիսկոպոսների պախարակուած վարքն ու բնաւորութիւնները , Մատինեանցը բողոքում է Վրաստանի կուսակալ Նէյազարեանի սկզբում նկարագրուած է տաճարի դրութիւնը , թէ ինչպէս անշուք եւ անսլայել է պահում Հայոց ընդհանուր ազգի Մայր Աթոռը , չնորհիւ հոգեւորականութեան : մի կողմը բուրվառի անուխը , եւ միւս կողմը սանդուխը , մի տեղ աւելը վար ընկած եւ այլըն . մի եւ նոյն ժամանակ իւր միայն էլ աւելորդ համարելով խնդիր է տալիս եւ ըստօրովին արձակում է : Վերոյիշեալ Ստեփաննոս եպիսկոպոսը դեռ վարդապետ էր , որ Ներսէսի առաջնորդութեան ժամանակին եկել էր Քիչնե Ներսէսի իշխանութեան ներքոյ պաշտօն վարելու : Բայց երկար չմնաց . որովհետեւ ինքը չափաւարձակ մարդ էր եւ կամենում էր ինք-

նիշխան լինել ստանձնած պաշտօնի մէջ . Ներսէսը ստանձնում էր նորա ինքնակամութիւնն : այս պատճառով էլ անբաւական լինելով նորա նից թողեց Բեաւարբեան , անպարսեց եւ դնաց էլ միմիայն : եւ շատ կարճ միջոցում եպիսկոպոս ձեռնադրուելով Կարեբի Յովհաննէս կաթողիկոսից հաստատուել էր Սինօքի անդամ : Մտաբերում եմ , թէ էլ միմիայն Սինօքից ինչ տեսակ կծու հրամաններ էին ուղարկում Ներսէսին , նորան վշտացնելու համար . եւ Արարատեան ալ մեծ տառերով ստորագրում էր «անդամ Սինօքի Ստեփաննոս արքեպիսկոպոս Արարատեան » : Երբ Ներսէսը կաթողիկոսացաւ եւ Պետրոսբուրգում էր դեռ . ս . էջմիածնի սինօքի առաջին անգամ յայտարարութիւն էր սղարկել կաթողիկոսին : Միւս անգամների թրւում նոյն Ստեփաննոս արքեպիսկոպոսը ռոտրադրել էր . « Ստեփաննոս նուազու եպիսկոպոս Վաղարշապատի » : Կաթողիկոսը շատ ծիծաղեց եւ այս խօսքին արտասահեց . « Փառք Աստուծոյ արքը դարձաւ նուազու , իսկ Արարատը Վաղարշապատ » : Յովսէփ եպիսկոպոս Տէր—Մարտիկեան Մողղուում մեռաւ , դեռ կաթողիկոսի էլ միմիայն հասնելուց առաջ , իսկ Ստեփաննոս եպիսկոպոսը կենդանի էր : Երբ 1845 թուին կաթողիկոսը զէպի էլ միմիայն զբնալիս Եկատերինադար քաղաք ժամանեց , նոյն օրը Մողղուի Հայերը բաղմութեամբ եկան

հայրապետի օրհնութիւնը ստանալու նորանց հետ էր եւ Ստեփաննոս եպիսկոպոսը : Կաթողիկոսը սիրով ընդունեց նորան եւ միամտացեց թէ անցեալը մոռացութեան է տուել . եւ դառնալով Մողղուի Հայերին , պատուիրեց պատուով պահել եպիսկոպոսին , ասելով թէ Աստուած յաջողի շուտով բերել կուսմ էլ միմիայն : ապա իւր արկղիկի բանալին տալով ինձ , հրամայեց 200 ըուպլի տալ եպիսկոպոսին , որ իսկոյն կատարեցի : Ողորմելի եպիսկոպոսը բնաւ յոյս չուէր Ներսէսի անյիշալարութեան եւ առատաձեռնութեան վերայ : Նոյն օրը կաթողիկոսը կառքը նստելիս , որ պիտի մեկնէր քաղաքից կրկին պատուիրեց Մողղուի Հայերին , որ որքան հնար ունին միմիայն արած պահեն եպիսկոպոսին : Երբ որ կաթողիկոսը ժամանեց Տիֆլիս , ինչպէս փոխարքայ իշխան Վարանցովին եւ նորա միջոցով վերադարձնել տուեց Ստեփաննոս եպիսկոպոսին Տիֆլիս , ուր էր եւ ինքը , Ներսէսը :

1847 թուի օստոիկ խօլերան մեծ կոտորած արեց Տիֆլիսում եւ համարեա ընդհանուր Ռուսաստանում : Ստեփաննոս եպիսկոպոսը վարակուեց խօլերայից եւ 24 ժամի մէջ մեռաւ , բժիշկների օգնութիւնը չփրկեց նորան եւ ողորմելին չարժանացաւ էլ միմիայն վերադառնալու :

(Շարունակելի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Ընկ. Ընդհանուր Ժողովը անդի պիտի ունենայ (վաղը) կհարկէ հակա. 10 ին կէս օրէ վերջ ժամը 5 ին Ազգ. Վարժարանին մէջ :

Կը խնդրենք պատուարժան անդամներէ փութալ ներկայ գտնուիլ կարեւոր խնդրոյ մը որոշումը տալու համար եւ ընդհանուր հաշուետուութեան եւ Գործ, Ժողովոյ նոր ընտրութեան :

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ

Վ. Առնապարի Վ. Առնապարի
Պ. Քերթեման Մ. Գարապէան

ԹԻԻՐՔԻԱ

Մանաստերի նահանգին ժելեւ-վո գիւղացի յոյն Բաւէլ վոյվոտան սպառնացեր է պուլկար դիւղերու ամէն երեւելիներուն, որոնք Յունաց Պատրիարքարանը ձգելով էքզարքի իրաւասութեան տակ մտած էին, թէ մահուան պիտի դատապարտէ զանոնք, եւ թէ նորէն պատրիարքարանին չդառնան :

—Կ. Պօլսէն կը հեռագրեն թէ ռուսական զեռպան Զինովիէվ դիմումներ ըրեր է՝ վերջնականապէս կարգադրելու համար 1878 ի պատերազմի միջոցին փաստող ռուսական հպատակներու տրուելիք փաստահտուցումի հարցը, Հատուցուելու գումարը կը հասնի 600000 թ. լիբրայի :

—Վիեննայի «Նայէս» Վինէր թակէպլաթ» լրագիրը Հռովմէն զրկուած մեծածխոք հեռագիր մը կը հրատարակէ, որուն համեմատ ընտրողական ժամանակաշրջանի միջոցին, Իտալիան՝ Գերմանիոյ ու Անգլիոյ հաւանութեամբը, Ափրիկեան թրիբուն պիտի դըրուէ :

—Կ. Պօլսոյ պուլկարական վարժարաններու տեսուչ Հալիլ էֆ. «պուլկարճա թահսի» անուն գիրք մը հրատարակած է, որ պիտի ծառայէ թրքական վարժարաններու մէջ պուլկար լեզուի ուսումին :

Սելանիքէն «Տնէվնիք» ի կիմացունէն «քանի մը Յոյներ յարձակելով նոյն քաղաքի պուլկար քահանայ Սթամաթի վրայ երբ տունը կը մտնէր, վեց հարուածեաններով սպաննեցին զայն : Թուրք իշխանութիւնը ու է ձերբակալում մը չկատարեց, գոհ, անշուշտ, որ Սուլթանին թագաւորութեան վտանգաւոր մարդ մ'ալ միանգամ ընդ միշտ մէջ տեղէն վերցաւ :

Անցեալ տարի սպաննեցին Այդ միեւնոյն քահանային որդին, որ խմբապետ մէր :

ՊԱՏԵՐԱԶՄ

Պերլին 5 հոկ. — Բեթերսպուրկէն հեռագիր — Պատերազմավայրէն Ռուսաց համար բարեյաջող լուրեր կը հասնին : Զօրապետ Նոծուի երկու բանակները բոլորովին փճացան : Ռուսական զօրքը գրաւեց Լինկն ու Սին—Բուն :

Պերլին ն. թ. — «Մաթէն» ի կը հեռագրեն Բեթերսպուրկէն Սիպերական թիւ 23 զօրաբաժինը, որ անձնագոհ եղաւ (բարձրութենէ մը վար նետուելով ամէնքն ալ մեռան) շտապօգնեց ռուսերուն յաջողութեան, ճառ մը Սպաներ կան կուրծքերէն սուխով վիրաւորուած : Երբ Ռուսերը տեսան թէ ինչպէս ճարտնցիք իրենց սուխներով վիրաւորեալները մէկ կողմ կը նետեն, անոնց վրայ յարձակեցան անհնարին զայրոյթով :

Այս յարձակումին մասնակցեցան Սէյնտօրֆ ու Զարուպէվ զօրապետները : Ամբողջ պատերազմի դաշտը ծածկուեցաւ արեան ճապաղիքով ու դիակներով :

Լոնտոն ն. թ. «Թայմը» ի կը հեռագրեն Շանկայէն : Շախոգետեղրի կռիւը վերջացած կը սեպուի : Զօրապետ Բուրօքի ծանր կերպով կորուստներ կրեց : Մարազախտ Օյամա կը պատրաստուի նոր ճակատամարտի մը : Պերլին ն. թ. — Զօրապետ Բուրօք թիւքին անձամբ կը հրամայէր զօրաց : Գնդակներու ու ռումբերու կարկուտի մը տակ կը գոչէր «Յաւա՛՛, յաւա՛՛, պէտք է յաղթենք ձարին ու հայրենիքին համար : Այդ կռուին մէջ մահացու կերպով վիրաւորուեցան Ռեքոնիք ու Օլէնսքի զօրապետները :

—Թօքիօ ն. թ. (Ռեթէր) Կիրակի օրը ռուսերը շրջապատեցին զօրապետ Նամժայի զօրաթիւը և անկէ դրաւեցին 14 թնդանոթ : Ռուսերը կը կեդրոնանան Օքու և Նոծու զօրապետներուն հանդէպ : Նորէն մեծ ճակատամարտի մը կսպասուի :

—Թօքիօ ն. թ. (Ռեթէր) Ռուսերը կատաղի յարձակում մը ըրին զօրապետ Օքուի գիրքերուն դէմ : Իսկ առջի գիշեր ալ յարձակեցան Նոծու և Բուրօքի զօրապետներուն բանակներուն վերայ բայց ամէնուրեք ետ մըղուեցան մեծ կորուստներով :

Թօքիօ ն. թ. (պոչտօնական) Զօրապետ Նամժայի ջոկաւը հոկտեմբեր 3 ին գնաց զօրացնելու տյն բանակը որ կը կռուէր Շախտուի հիւսիսային կողմը : Այս ջոկատը թշնամին յետո մղելէն ետքը պաշարուեցաւ ռուսական զօրաբաժինէ մը, բայց յաջողեցաւ խզել թշնամոյն կարգերը :

միայն թէ ստիպուեցաւ կռուի դաշտին վրայ ձգելու 14 թնդանոթ, որոնց ձիերը սպաննուած էին :

Մարազախտ Օյամա կ'իմացունէ որ 4-5 ի լուսնալու գիշերը Ռուսերը երկու անգամ յարձակեցան ճարտնցիներու ձախ թիւին վրայ բայց ետ մղուեցան պատերազմավայրին վրայ ձգելով շատ մը մեռեալներ :

Հռոմ ն. թ. — Մայր Արեւելքէն եկած տեղեկութիւններէն կը տեսնուի թէ Ռուսերը կը յառաջանան մարտաճակատին ամբողջ գծին վրայ :

Հեռագրէ մը կը հասկցուի որ ռուսերը անգամ մը 14 թնթանոթ գրաւեցին, անգամ մըն ալ 16

Լոնտոն 6 հոկտ. — Թօքիօյէն կը հեռագրեն — Խիստ շատ վիրաւորեալներ կը բերեն հոտ պատերազմադաշտէն : Կարմիր Խաչին կը պահսին նիւթական միջոցներ անոնք ամէնքը տեղաւորելու : Պատերազմի դաշտը ծածկուած է դիակներով : Անձերեւէն ետքը արեան հեղեղներ կը վազեն : Վիրաւորեալներու աղաղակները խառնուելով հրագէտներու պալթիւնին հետ, աղեխարշ ազդեցութիւն մը կընեն դիտողներու վրայ : Թնթանոթները արեւներու մէջ կը լսուին :

—Պերլին ն. թ. — Պալթիկեան նաւատորմին ամենամեծը 8 թորփիլանաւերով մեկնեցաւ դէպի Ծ. Արեւելք :

ՎՐԱԿՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մարազախտ Օյամա, Ինքայէն օգնական զօրք ստանալով, նորէն սկսաւ իր յառաջխաղաղացութիւնը Ռուսերու կեդրոնին դէմ : Ռուսերը յուսահատ ընդդիմութիւն մը ցոյց կուտան և ծանր ծանր կը նահանջեն :

—Լոնտոն ն. թ. — Զօրապետ Օքու կ'իմացնէ թէ 3 կիսավաշտէ բաղկացեալ ճարտնական բաժին մը 3 հրետանիոս, որ կը հալածէր թշնամին, երկաթուղոյ գծէն խիստ շատ դէպի արեւելք հեռացած ըլլալով, յարձակում մը կրեց 12 կիսավաշտ ռուսերէ և 8 թնդանոթ կորսնցուց :

—Զիֆու ն. թ. (Ռեթէր) ճարտնցիք ամսոյս 3 ին անյաջող յարձակում մը ըրին Էրլանշանի գիրքերուն վրայ : Ապա դրաւեցին շրջակայ բարձրութիւնները և նոյն ամիսցէն 500 մեթր հեռու գտնուող երկաթեայ կամուրջը : Սեպտեմբեր 27 ին 9 ռուսական թարբիլահալածներ նաւահանգիստէն դուրս ելլելով ռմբակոծեցին թշնամին սակայն ապա ստիպուեցան ետ դառնալ Այդ միջոցին ճարտնական թոր

փիլահալած մը ընդժողեայ ապահով մը զարնուելով մեծապէս վնասուեցաւ : Հսկա 3 ին կռիւ մը տեղի ունեցաւ Էրլանշանի բոլորտիքը ուր ճարտնցիք 300 հոգի կորսնցուցին : ԲարթԱրթուրի պահապան զօրքը կը բաղկանայ այժմ 5000 հոգիէ :

—Կ. Պօլսա ն. թ. Բոր Սախտի ու Տալէթի մէջ ժանտախտի գէպքեր և նոր գէպք մըն ալ Զիֆուիայի մէջ պատահելուն համար, առողջ ապահովան խորհուրդը որոշեց բժշկական քննութեան հիւթարկել այդ քաղաքներէն եկողները :

Լոնտոն ն. թ. — Սթանտարտ կ'իմանայ Գուրօքի գլխաւոր բանակաւորէն թէ ամսոյս 5 ին Ռուսական կիսավաշտ մը, որ թայցելօ գետակէն կ'անցնէր, յարձակում կրեց ճարտնցիներէն եւ ամբողջապէս ընալինջ եղաւ շրջահար թնթանոթներու կրակէն :

—Պուրէշ 8 հոկտ. — Ռուսանիոյ Պատերազմական նախարարը որոշեց երկու զինուորական կցորդներ զրկել պատերազմավայրը, որպէսզի հետեւին ճարտնական բանակի գործողութեանց

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, ԶԱՆԻՐԷ	Հոկտ. 9
ՊՈՒՂՏԱՅ	
Վալիօն 54-60 լիպ.	9.80 / 11.80
Արապա 52-62 լիպ.	9 / 12 20
ԱՐԲԱ	
Վալիօն 100 քիւօ հին	
նոր	10. — / 10.40
Արապա 42-45 լիպ.	5.40 / 6.
ՆՈՒԼԱՖԱՐԱՅԱ 33/36 լպ.	4. 30 / 4. 70
Վալիօն 100 քիւօ	10.40 / 10.60
ՅԱՍՈՒԼԵՍ 100 քիւօ	26 -- 28
Արապա 100 քիւօ	25 -- 29
ՏԱՐԸ արապա հոգ	
ՔՕԼՕԶ արապա 55-60 լպ	9. 90 / 11
ՄԻՍԻՐ 100 քիւօ	
ՉԱՎՏԱՐ արապա	7.90 — 8. 10
« Վալիօն	7.60 / 8.
Կիւնտէ 40 — 50 Վալիօն վէ	7-800
արապա կէլմէքտէ . Վալիօն մուամէլէս	
նարօլէօն 20 քիւ. արապա մուամէլէս	
նարօլէօն 20. 10 :	
ՍՐԱՐԱՅԻՑԷ	
նարօլէօն 20, 20 քիւնք	
Օսմ. լիբասը 22, 75 ալթուն քիւնք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարնա բիսցապոնտա պաղգալիյէ	
մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն քիւնք իւլէ :	
ԳԱՀՎԷ	1,90 / 2
Շէֆէր նէմէ	70
Շէֆէր (քէսմէ) սանտրպ	38.
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը	47.
» ճարտն »	38.
» Ինկիլիզ »	28
» Ինդոն »	50
ԿԱԶ, անտրղը	9. 40
ՉԵՅԻՆ ԵԱՂԸ քիւօ	90. — 1
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	30